



ԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՄԵՐԱԿԱՆ

Գրական և Գիտական

Encyclopédie

ՏՆՕՐԷՆ - ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

Հ. ՍՈՒՍՆ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 68

1899 ՅՈՒԼԻՍ 24

H. Polad, Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Turquie Constantinople

در علمیه ده بفتح قیوسنده اسکی ضبطیه ده
۱۹ نومروی دکانده (خازراقیداک) مجموعه علوم
غزیه سی سر محرری (بولاد) اقدی

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՂՎ. — Մեր ղզայուն գրողը
ԿԷՆ. — Միտիտարներ և ձենանան
ԿԷՆ. — Դրամատական : Տգգ. Ջաղաարեանի գրքին
ԽՈՂԹԻՆ
Մ. Բ. Մարտի. — Երկրագործութիւն
Ս. Բ. Բեյլի. — Երկրաբանութիւն
Ն. Բ. Մարտի. — Երկրաբանական
Բ. Բ. — Արհեստագիտական. — Ստղագիտ.
Ղ. Բ. — Գիտականական
Թերթոն Հանրագիտակի. — Ուղեւորութիւն երկրի
Կեդրոն (ժիւլ Կէրն)
Թղթակցութիւն, Աղջ Կէսլին

Թուրքիայ համար տարեկան	50 զրշ.
» » վեցամսեայ	26 »
» » եռամսեայ	13 »
Արտասահման տարեկան	15 ֆրանք
Կամ 6 րուպլի	

Հատը 40 փարայ	
Դրամի տեղ կ'ընդունուի նամակի դրոշ-	
մաթուղթ, 50 հատ 1 զրշ. նոց դրոշ-	
մաթուղթ 50 զրշ. փոխարէն :	

Տպագր. Գ. ԳՍՅՈՒՆԵԱՆ
Կ. Պոլիս, Պապ-Ալի ճառասէսի, Թիւ 4

Շնորհակալութեամբ ստացած ենք Վենետիկի Միթարեան ուխտի Միաբան Վեր. Հ. Ս. Ղազարեանի հետեւալ աշխատութիւնները՝ Վեր. հեղինակին կողմէ։

Հատընտիր քերթուածք, Քարմէն Սիլվաի. 1897.

Նուէր Մանկանց. — Առաջին փունջ. Աշխարհաբար ոտանաւորներ մանկական մտաց յարմար. — 1897.

Լուսթիւն. Վիկտորիա Ալանուրի. 1896.

Հատընտիր քերթուածք, Յակոբայ Լէոսարգեայ։ Ոտանաւորաց խալերէն բնագիրն ու հայերէն թարգմանութիւնը գրքոյկին մէջ գէտ առ գէտ դրուած. 1898. Այս վերջինը հրատարակուած է ի նպաստ Հայ Որբանոցին՝ որ ի Ռէքանադի. գին 1 ֆր.։

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք որ, Ազն. Արդաքի էֆ. Տէր Ստեփանեան բարեհաճած է մէկ օրինակ «Հանրագիտակ» նուիրել, Արարկիրի Ազգ. Որբանոցին։

ՍԱՄՍՈՆ. — Արտաշէս էֆ. Պ. Վարպետեան. — Ստացած ենք ձեր յանձնարարած վաճառատունէն 50 դահեկան. զրկեցինք այս թղթատարով, թիւ 53—68։

ՄԵՐԱՍՏԻԱ. — Մանուկ էֆ. Գ. Պէյէրեան. — Ստացանք Քէչեան էֆ. է 75 դահեկան. ձեր ուզած պակաս թիւերը անգամ մը շրկած էինք. այս անգամ կրկին կը շրկենք. ոչ միայն խաշար և կռիւէր պանիրի, այլ և ուրիշ շատ մը ընտիր տեսակէ եղող պանիրներու պատրաստութեան եղադակներուն վերայ պիտի գրենք, և կը յուսանք որ, այս մասին մեզ հարցում ուղղող, մէկ քանի գաւառացի բաժանորդաց միանգամայն գոհացում տուած՝ կ'ըլլանք՝ ուստի՝ բաժանորդ գրուիլ փափաքող անձը կրնայ այժմէն վստահ ըլլալ մեր խոստումին։ Իսկ հայելիի պատրաստութեան մասին հարցում ընող պարոնը թող ջանայ 4 բաժանորդ գտնել, և բաժնեգինները կանխիկ շրկել մեզ, այն առիւն պէտք եղած ծախքը մեր կողմէ ընելով, գոհացուցիչ կերպով կը պատասխանենք իրեն։

ԵՐԶԵԿԱ. — Յ. Տըմպրեան էֆ. — Ստացանք «Արեւելք» ի խմբագրատունէն 25 դահեկան. Գ. շրջանի Ա. վեցամսէին համար։

ՎԵՆԵՏԻԿ. — Միթարեան Տպարան. — Ղրկած ենք շարթուս, 40 ֆրանք, Աւստր. թղթատարով. մանրամասնութիւնը նամակով։

ՔԷՅՕԹԱՀԵԱ. — Մանուկ էֆ. Չիլինկիրեան. — Ղրկուեցաւ շարթուս, «Մայիս երջափթ» ի ֆրանս. ամբողջ հաւաքածոն թղթատարով։

ՄԱԼԱԹԻԱ. — Յ. Թիֆթիքճեան էֆ. — Ինչ որ կ'ուզէք նամակով գրուի ձեզ, արդէն շատ ուշելի ընդարձակօրէն բացատրած ենք «Հանրագիտակ» ի մէջ, անցեալ տարուէն է ի վեր, և դեռ կը շարունակենք, ու միշտ պիտի գրենք շերտամբուծութեան վրայ. առկէ անգին՝ պէտք է մէկ քանի օրեր վարպետի մը քով ծառայէք։ Ներկարարութեան մասին ալ, պէտք է որ կարգաւ երթանք. եթէ ամէն մէկու կողմէ եղած հարցմանց զատ զատ պատասխանել հարկ ըլլայ, գիտէք որ «Հանրագիտակ» ի պէս 20 թերթ ալ ըլլայ, չի բաւէր. շարունակութեան մէջ կը գոհանաք։

ԻԶՄԻՏ. — Դործակալ. — Ստացած ենք նամակնիդ. կը շրկուին 49—52 երկերկու օրինակ։

ՇԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ (MICROSCOPE)

ՄԻԼԼԱՆՑԻ ՀՈՉԱԿԱՒՈՐ ԲՈՐԻՉԲԱՍ ՏԱՆ

Կեդրոնատեղի

Յ. և Ա. ՊՈՒԼՈՒՏԵԱՆ Եղբայր Դեղարանը
Ի ԶՄԻՔԷ

ուր կը գտնուի նաեւ շէրամի հունտի պատրաստութեան համար ամէն տեսակ պիտոյք, դիւրամատչելի գներով։

Ծանօթ. — Մանրագիտակներու տեսակներուն և գիններուն վրայ փափաքողներու, մանրամասն տեղեկութիւն կը տրուի թղթակցութեամբ։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ


Դ. ՌՈՒԱՑ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 68

1899 ՅՈՒԼԻՍ 24

ՍԵՐ ԶԳԱՅՈՒՆ ԳՐՈՂԸ



Սիրելի «Անցորդ», ա՛յ չգիտացայ «Բէլա կառաւներ» խորագրով նօթիդ անուշութեանը, և անոր երաժշտութեան վրաս թողած տպաւորութեանը տակ՝ հիացումս կը յայտնեմ անկեղծիկ։ Զգացմանս յստակութիւնը՝ կը վախճամ որ անճարակ բառերովս իրաւօտացնեմ, բայց ի՞նչ բնեմ... :

Զեմ գիտեր ո՛ւսկից եկար երգող թռչունի մը պէս թռուեցար, գրական բուրաստանին գեղուղէջ ծառին վրայ։ Բացատրութիւններդ խկատիւղ, բառերդ ընտիր ու քաշող, զգացումներդ յաւէտ գովելի։ այդ յատկութիւններով օժտուած մշակեալ անձդ կրնար միայն առաքինի ըլլալ, չէ՞ բարիքը կ'յանձնարարես նոյն իսկ Հայրերուս... :

Ա՛, անբիծ սիրտ մը ունիս դուն։ Հոն կը փթթի շուշանը, մաքուր կեանքի նշանակ։ Գիտե՞ս, ես ալ կ'ապրիմ պաշտած որդուհինբուռ մէջ ամէն օր, և անոնց ներդաշնակ չլուկին մէջ կ'արտադրեմ այս տողերը։

Շատ կ'սիրեմ ամէն անոնք՝ որ որբերը

կ'սիրեն։ զգայուն ու սրախօս գրիչդ կ'հիւսէ։ «Մանուկը՝ խայտացող ու թարմաւէտ գեղեցկութիւնն է կեանքին, մանուկը ցաւի մէջ կ'ծնի, ու ժպտոն է բնութեան։ մանուկը միակ հօտ մը կ'ճանչնայ՝ մանկութիւնը, ու միակ կրօնք մը անմեղութիւնը»։

Ամէնքնիս ալ բարեբախտ ենք, վասն զի ունինք վայրկեաններ, ուր մանուկ կ'դառնանք։ Մանկութեան ժամերը մեր կեանքի բիւրեղն են, որուն մէջէն կ'տեսնենք միայն «մաքրութիւն», սրտով մանուկներուս ըլծակէտը՝ չէ՞ ասի։

«Սիրել նմանը՝ պարտք։ սիրել նմանը մանուկ, այսինքն, տկար էակ, մանուկը որբ ու աղքատակից...» Այո՛, առաջին սէրը Աստուծոյ պաշտումն է։ երկրորդը՝ մանուկին գուրգուրալն է։ անհուն խանդաղատանքով լեցուած ենք տկարներուն հանդէպ, անշուշտ ոմանք Յիսուսի օրինակին հետեւելով։

Է՛հ, ըսէ՛ք, ո՞ր քաղաքակրթութիւն հուկառակ կեցաւ այդ ճշմարիտ սէրին, ո՞ր պատամիտ ուզեց ջնջել բարիքը նմանին։

Հ. Ալիշանի «Մանկունիոն» Աւետարանին պէս, այդ երկուքը չպատուիրեց։ խօսքին՝

գործը պետք է յաջորդէ. այնպէս կ'կարծեմ թէ «արտի ձէնիկը պիտի խօսի Միխիթարեաններու մէջ ասկէջ ետք, ու Ագրիականի դշխոյին խորհող բանասէր միտքերուն քովը պիտի բողբոջի ծաղիկ մանկութիւն մը: Կը ձանձնամ անոնցմէ մէկին՝ Հ. Ս. Երամեանի խորունկ սիրտը:

«Կեանքը կ'ապացուցուի սիրով». այդ սէրը ամէնու է բաժին, որբերուն ալ... ուս զուարթ փոքրերուն նայած ատեն, կ'լսեմ գոյժը գաւառացի երկու որբերու մահուան. դժբախտութիւննին լեցած է. ինծի կ'մնար պատարագ ընել ասոնց մատաղ հոգիներուն՝ իմիկներու» երգերովը:

Զուարթ ճիծերը կ'մեծնան, ու կ'դառնանք անոնց սիրոյ առարկան. այդ զգացումը կ'կարգանք անոնց ժպտին, անոնց ակնարկին մէջ. ո՛րքան կ'յուզէ և պիտի յուզէ մեզ անոնց թոթոված երախտագիտութիւնը:

Տեսած եմ ես անոնց աղօթելը իրիկնադէմին. ի՛նչ անհուն նայուածք երկինքին, ի՛նչ անճառ մաղթանք Տիրոջը: Ու վաղամեռ Դուրեանիս պէս կ'փորձուիմ հարցնելու. «Ո՞րն է մաքուրը, մանկան «աղօթքը» թէ ծաղիկին բոյրը». անշուշտ «աղօթքը մանկան» որ մինչեւ երկինք կ'հասնի»:

Որբուկները խնամողներու համար տաժած համակրանքս գրչով չեմ կրնար բացատրել:

Ուրեմն ինծի ևս կ'ներեմ, «Անցորդ», ողջունելու Հ. Պ. Գաթիթանեանը. արդէն սերտ բարեկամս է իր եղբայր, պատկառելի ծերունազարդ վարդապետն Հ. Եղիշէ: Դժբախտները կ'սիրեն երկու հարազատներ, գիտնալով որ «Սէրը կ'կատարելագործէ ազնիւ հոգիները»:

ՊԼՈՒԶ

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐ ԵՒ ԶԷՆԱՆԵԱՆ

(Շար. թիւ 66 է)

Գանք հիմա ձէնանեանի դէմ մի քանի միսիոնարներու մասնաւոր ատելութեան պատճառներուն:

Ձէնանեան ի ընէ զգայուն, վառվռուն և անկախ ոգւոյ տէր քիչ մը ժամանակ թուրքիոյ մէջ քարոզչութիւն ընելով՝ պատանեկութեան հասակին մէջ իսկ մեծ համբաւ տառնալէ յետոյ, կ'երթայ յԱմերիկա՝ կատարելագործելու համար իւր Աստուածաբանական ուսումը, և հոն միտքը կը դնէ հաստատել թուրքիոյ մէջ վարժարաններ՝ որոնցով մեծ իրաւամբ կը յուսայ օգտակարագոյն ծառայութիւնը մատուցանել իւր երկրին:

Շատ աշխատութիւններէ և դժուարութիւններէ յետոյ, կը յաջողի վերջապէս բարեւէր ամերիկացիներէ ընկերութիւն մը կազմելով՝ ձեռք բերել մեծագումար դրամագլուխ մը՝ բանալու համար վարժարան մը. և «իր» բաղձանօք իրեն իբրեւ օգնական ամերիկացի մ'ալ առնելով հետը՝ կու գայ, կը հաստատէ նախ Տարսոնի Ս. Պօղոս վարժարանը: Ժամանակէ մը յետոյ, այդ ամերիկացի օգնականն կը սկսի ոտնձգութիւններ ընել ձէնանեանի դէմ, սա՛ մեծամտութեամբ անշուշտ թէ՛ ինչո՞ւ ամերիկացի մը թուրքիացիի մը ստորակարգեալ գտնուի. ասոր վրայ ձէնանեան կը ստիպուի՝ գրելով եղբւրս թիւնը դարձող ընկերութեան վարչական ժողովոյն՝ պաշտօնէ ձգել տալ սոյն ամերիկացին. և սա կ'երթայ կը հաստատուի թուրքիոյ մէջ՝ մի ուրիշ տեղ՝ մի ուրիշ ընկերութեան կողմէն:

Սիւս կը յաջորդեն իրարու ետեւէ իրրեւ ձէնանեանի օգնական՝ 2-3 ամերիկացիներ ալ, որոնք միեւնոյն պատճառով և կերպով կը հեռանան վարժարանէն, և կը հաստատուին այլուր, բնականաբար ոխերիմ թշնամի ըլլալով ձէնանեանի՝ իրրեւ պատճառ իրենց անկման:

Ահա՛ մի քանի միսիոնարներու ալ, մասնաւոր ատելութեան շարժառիթն՝ ձէնանեանի դէմ: Հոս փակագծի մէջ ըսենք թէ՛ ձէնանեան ո՛չ թէ լոկ «Թարսուսի Ս. Պօղոս հաստատութեան յետ յարաբերութիւն ունէր», այլ նորա ընկերութեան կազմակերպողն, վարժարանի հիմնադիրն և ընդ երկար տնօրէնն եղած է. զպնց միառնէք յիշատակէ՛ք կէլ անոր ինչ ինչ մասնաւոր ծննդութիւնները, և վարժարանի կազմակերպչութիւնները:

իւր համեմտութիւնը չհաւանիր անոնց հըռ-
չակուելուն:

Այս ձէնանեանի օգնական տրուած 3-4 միլիոնարներու այսպէս պաշտօնանկ ըլլալէն ետքը, ընկերութեան կողմէն՝ իրրեւ ընկեր ձէնանեանի՝ կը զրկուի վերջին անգամ նոյն վարժարանին այժմեան տնօրէնը Տքդ. Բրիսթի: Սա ևս նախորդներուն պէս ժամանակ մը միաբանութեամբ գործելէ, և ձէնանեանի անձնուէր բարեսիրութիւնը և ճշմարիտ ար-
ժանիքը գովելէ ետք, իւր կարգին սկսաւ համերաշխութեան հակառակ ուղղութեան մը հետեւիլ. այնպէս որ՝ ձէնանեան լաւ հո-
մոգուեցաւ թէ՛ «առանց հլու և խոնարհ գիրք մ'ունենալու միախնայներու հանդէպ» կարելի պիտի չըլլայ վարուել անոնց հետ: Սակայն այս տեսակ ընթացք մը հակառակ լինելով իւր անկախ ոգւոյն՝ լաւագոյն հա-
մարեց, փոխանակ անհամաձայնութեանց թատր մը դարձնելու սոյն հաստատութիւ-
նը, վեհանձնարար հրաժարիլ իւր երկունց ծնունդէն, բաժնուիլ իւր ըղձից և յուսոց կեդրոնէն, և թողուլ իւր գորովոյն բոյնը իւր հակառակորդին. որպէս զի մի՛ գուցէ նոր սերնդեան դատարարակութեան նուիրա-
կան գործը փնտռուի այսպիսի շարունակա-
կան հակադրութեամբ: Ուստի մեկնեցաւ անտի ձէնանեան՝ թողլով իւր ամէն ստորա-
կարգեալ պաշտօնեաններուն, բոլոր աշակերտ-
ներուն, և ամբողջ քաղաքի բնակիչներուն սրտերուն մէջ անմուտց յիշատակ մը, ան-
ջնջելի երախտագիտութիւն մը և յարգալիւր սէր մը, որով կը պաշտեն ցարդ զինքն ի մեծ տհաճութիւն Տքդ. Բրիսթիի՝ որ արդէն ծայրայեղ ատելութեամբ վառուած է անոր դէմ:

Բաժնուեցաւ ձէնանեան, բայց այդ տը-
խուր բաժանում չկրցաւ մարել իւր եռանդն: Նախ Գոնեայի մէջ բացաւ դպրոց մը, որ հետզհետէ փոփոխութիւններ կրելով և աս-
տիճանաբար յառաջդիմելով՝ այսօր եղած է բարձրագոյն վարժարան մը՝ գրեթէ գովէճնե-
րու հաւասար. ապա ելթալով Ամերիկա՝ սկսած է հանգանակութիւններ ընել ի նպաստ իւր գթասիրական ձեռնարկութեանց, և հապտադած է Թուրքիոյ մէջ այլևայլ տեղեր

կրթական և բարեգործական յարկեր, որոնք թէպէտ տեղական մեծ դժուարութեանց բաղխեցան՝ շնորհիւ միախնայրաց և մասնա-
ւորապէս Տքդ. Բրիսթիի մեքենայութեանց, սակայն ի վերջոյ ձէնանեան յաղթեց այս ամէնուն իւր աննկուն գործունէութեամբ. և ինչպէս հոս՝ նոյնպէս և Ամերիկայի մէջ, յաջող ընթացք մ'ունեցան իւր գործեր: Այս յաջողութիւնը բնական էր որ ի հուր բոր-
բոքէին Թուրքիոյ միախնայները, մասնաւո-
րապէս ձէնանեանի վերոյիշեալ նախկին գժտեալ պաշտօնակիցները, և նա՛մանաւանդ Տքդ. Բրիսթին՝ զոր ահա այս քննախառն նախանձն է որ կը մղէ գրել ամերիկեան լրագրին թէ՛ «Թարսուսի... հաստատութիւ-
նը թէ և խզած է իւր յարաբերութիւնները յիշեալին (ձէնանեանին) հետ, սակայն ձե-
նանեան տակաւին կը շարունակէ իւր հա-
ւաքումն այլևայլ տարրեր և անկախ նպա-
տակներով, և անդադար կ'աշխատի սոյն հաստատութեան կործանման. ի մէջ այլոց յիշեալով թէ իւր ժողոված դրամներու մեծ մասն ալ նպատակին չէ հասած — կորսուած էր»: Բայց ինչո՞ւ աշխատի ձէնանեան Թար-
սուսի վարժարանին կործանման՝ զոր «ինքը» հաստատեց, և մի՛թէ անոր կանգուն և փայ-
լուն վիճակը պարծանք մը չէ՞ հիմնադրին. մարդ ո՞րչափ անխոհեմ պէտք է ըլլայ որ իւր վառքը ջնջել աշխատելու յիմարութիւնը գործէ. արդեօք Տքդ. Բրիսթի իր դպրոցը արդիւնաւորապէս կառավարելու մէջ ունե-
ցած անճարակութիւնը գոցել կ'ուզէ ձե-
նանեանը զրպարտելով՝ իբրեւ խախնարար իւր գործոյն յառաջդիմութեան, և արդէն՝ եթէ ուզէ ալ խափանել, ի՞նչ կրնայ ընել, քանի որ դպրոցին նիւթականը ապահովուած է, և ձէնանեան կը գտնուի անկէ շատ հե-
ռու երկիր մը:

Նոյնպէս՝ եթէ ձէնանեանի ժողոված դրամ-
ներու մեծ մասը նպատակին չէ հասած — կորսուած է, ուստի՞ կը մատակարարուին ձէնանեանի խնամոց տակ գտնուող որբերու, այրիներու և կարօտեալներու ծախքն, ու քարոզիչներու, ուսուցիչներու և այլ պաշ-
տօնէից վարձքն. ո՞վ կու տայ անոր ձեռամբ թէ՛ Թուրքիոյ և թէ՛ Ամերիկայի մէջ բազ-

մաթիւ աղքատ ուսանողներու պիտոյքն. և ի մասնաւորի ինչպէս կը կառավարուի Գոնեայի ձէնԱՆԵԱՆ վարժարանն, այն կարեւոր հաստատութիւնն, որ ուրիշ չափ նմանեցնելի աւելի օգտակարապէս կը ծառայէ երկրին. և ասոր վրայ ինչ առաւելութիւն ունի այժմ ՏԶԳ. Քրիսթիէն կառավարող Թարսուսի վարժարանն՝ ունենալով հանդերձ իւր տրամադրութեան տակ աւելի քան 30,000 ոսկիներ որք ձէնանեանի քրտանց արդիւնքն են: Այսօր անուարանալի իրողութիւն մ'է որ Թուրքիոյ մէջ բնիկք ո՛ր և իցէ գարծ, նուազ ծախքով և աւելի լաւ կը կատարեն, քան օտար միսիոնարներ. արդէն ստոնց ըրածն ինչ է կէս դարէ աւելի երկար ժամանակի մը մէջ ա՛յնքան ծախքերով: Սակայն միսիոնարք, մասնաւորապէս ՏԶԳ. Քրիսթի, ուրիշ ինչ կրնային բնել ձէնանեանի վալլուն յաջողութիւնները կասեցնելու և վառքը նսեմացնելու համար. արդէն ամէն ինչ փորձեցին՝ բայց ի վեր, միայն մնացած էր անոր անունը սղարտել. ի գործ դրին այդ վերջին հնարքն ալ՝ թափելով ամէն կողմէ ամէն ճիգ: Խօսեցան, գրեցին, ազդեցութիւն բանեցուցին, օրինաւոր թէ ապօրինի միջոցներու դիմեցին, իւրեանց բոլոր զօրութեամբ աշխատեցան, լեցուցին շատերուն ականջները, պղտորեցին միտքերը, ճանձրացուցին, և՛ քանի՛ քանի՛ անգամ այլ և այլ տեղեր յատկապէս միսիոնարներու այդ «աղբորոքը» քննելու համար կազմուած ժողովներու առջև, ձէնանեան անպարտ արձակուելէ յետոյ, վերջապէս՝ յօգուածագրին խօսքին նայելով՝ նիւ Եօրք (անչուչտ Պօրտի անդամներէն) կազմուած մասնաւոր ժողովոյն որոշման մէջ դնել տուին սա՛ առածգական խօսքը՝ թէ «Այլ ևս ձէնանեանի գործը չեն կրնար վաւերացնել արդի պարագաներու բերումով»: Արդեօք ինչ քուէ կ'ուզեն այդ բանաձեւով, մի՞թէ կ'ուզեն իմացնել թէ, քանի որ Թուրքիոյ միսիոնարաց աչքերուն կը մըրիւն՝ հակառակ ամէն խոչնդոտներու՝ ձէնանեանի յաջողութեանց փառքին ճառագայթները, և քանի՛ որ ա՛յլ միսիոնարներու հետ է իրենց Թուրքիոյ մէջ ունեցած բաւարարական գործն ալ, և զանոնք ամէնը

դժկամակեցնել կրնա՛յ վնասել իրենց գործերուն բարեօք ընթանալուն, հետեւաբար ստիպեալ են կամայ ակամայ այդպէս խօսիլ և ազատել անոնց ժողովներէն. ա՛յս է արդեօք «արդի պարագաներու բերումը»՝ որուն համար «չեն կրնար» վաւերացնել ձէնանեանի գործը: Սակայն եթէ ցարդ չեն ստիպած, թո՛ղ ի միտ աւնուն միսիոնարները թէ՛ ձէնանեան յօգնող, տաղտկացող, վհատող մարդ չէ. ձէնանեան ծնած է անդուլ աշխատելու, դժուարութեանց դէմ անընդհատ մաքառելու և միշտ բարերարելու համար. թո՛ղ լաւ գիտնան թէ՛ այդ կուռոյն մէջէն ալ յաղթող պիտի ելնէ (եթէ արդէն ելած չէ), ինչպէս ելած է ցարդ շատերէն. և իրենք ի վերջոյ պիտի մնան ամօթապարտ և խղճահար, բայց ձէնանեանի բաց և ամբիժ ճակատը պիտի փայլի իւր բարեգործութեանց փառապատկով: Երանի՛ թէ իրենք ալ ձէնանեանի ուղղամտութիւնը և վեհանձնութիւնը ունենային, յայնժամ Թուրքիոյ քրիստոնեաները մտապէս և բարոյապէս հիմակուրնէ շատ տարբեր և բարձր հանգամանք մը կ'ունենային այսօր:

ԿՇԻՌ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՏՈԳԴ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ

«Ծննդական Գործարանք» գրքին առթիւ

(Շար. թիւ 67 էն)

—o—

Հայ գրական հրատարակին, և մեր բժըկական դասին անձամբ, կամ դիմովաւոր ՏԳԳ. Մ. Վահէ ոմն՝ պաշտպան կանգնել կը նկրտի ՏԳԳ. Տաղաւարեանի ձախողւածին,

որու սակայն, խորհուրդ կու տանք բարեկամաբար, որ նախ հայերէն սովորի, և ապա հրապարակ նետուի, և ի միջի այլոց «գիտնական» (savant) բառը չի չիփթէ «գիտական» (scientifique) բառին հետ. թէ նախ հետաժուտ ըլլալով ուսումնասիրէ, Տգդ. Տաղաւարեանէ առաջ՝ և շատ տաղանքի, ոչ-բժիշկ և սովորական մահկանացուներու կողմէ, արդէն այդ ճիւղին վրայ, աւելի յաջողակութեամբ՝ թարգմանաբար ի լայն ընծայուած հրատարակութիւնները, որոցմէ շատերու ուղղութեան և պարունակութեան մասին՝ ու է ակնարկութիւն չունինք ընելիք, լեզուաբանական և բարոյական կրկնակ տեսակէտներով, և անկէ՝ վերջը ելլայ ըսէ թէ՝ «... մեր մէջ ընդհանրացած սովորութիւն է, որ ձեռնհաս մարդիկ իրենց գիտութեան մի մաս հանեն և տալով զայն ժողովրդին, սատարեն անոր բարոյական և ֆիզիքական բարգաւաճմանը»։ Կը սրտուիրենք իրեն որ, նախ բարոյականի սկզբունքները սովորի, և ապա՝ ուշադրութեամբ կարգայ՝ այլ ո՛չ ըստ իւր ասութեան «բաւական մանրամասնորէն աչքէ անցնելէ յետոյ այս գործը ելն» և այնպէս յանձնարարէ զայն ժողովրդին. և կրկին՝ եթէ կ'ուզէ, բոտ իւր ասութեան, թող իր «հաճոյական պարտականութիւնը» կատարելէ ետ չլիւնայ, իբրեւ բժիշկ՝ իր արհեստակցը շնորհաւորելով, ասոր անճոռնի հրատարակութեան առթիւ. բայց եթէ կ'ուզէ, կամ աւելի իր ըսածին պէս, եթէ «կը ցանկայ այդ գործին և անոր պարունակած գաղափարներու տարածուիլը», այս անգամ ալ խոնարհաբար կը խնդրենք իրմէ, և իր համախոհներէն, Տգդ Եղաշտապանդներէն կամ կուսակիցներէն որ, իրենց ընտանեկան չըջնաակէն սկսին փորձը՝ և առեւին օրինակը իրենք ցոյց տան մեզի, որպէս զի մենք ալ համալուրինք իրենց անկեղծութեան, և ճշմարտասիրութեան՝ յանուն հանրային շահերու. այս կէտը՝ արդէն բացորոշապէս պարզած ենք «Հանրագիտակ»ի 64րդ թւոյն մէջ, կը յանձնարարենք որ ուշադրութեամբ կառնան զայն։

Մի՛ կարծէք, բարեկամ, որ ժողովուրդը ազէտ կամ ապուշ է, և ձեր վազաշոտ ու կեղծաւոր գաղափարները իբրեւ պատգամ

պիտի ընդունի. գիտցէ՛ք որ, ամենէն ահեղ և անաշատ քննադատը՝ նոյն ինքն ժողովուրդն է, որ կը զայրանայ՝ այն ամէն ճշմարտութեանց դէմ, որոց կուսապատկառ քողը յանդգնօրէն պատուելով, անխոհմօրէն պարզուած ու բացատրուած են. և այսպէս՝ հանրային մամուլի գրասեղանին վրայ կը նետէ իր արդար ու վճռական բողոքը, և մամուլի բեմէն խստիւ կը յայտարարէ, ու հարուածելով, ջախջախելով կը քննադատէ, այդ օրինակ գայթակեցուցիչ ու անբարոյացուցիչ գաղափարներ ու հրատարակութիւններ։

Մեր յարգելի ու բարեմիտ գրադատ Տոգդուրի այդ յօդուածին տակ է որ, կը նըշմարենք հետագայ անբարոյապաշտ և յոխորտալիր ծանօթութիւնը, որ գրուած է նոյն թերթի խմբագրութեան կողմէ, չենք գիտեր ի՞նչ նկատառումներով։

«Մեր միջավայրի բարքերուն մէջ, կեղծեւր ամէն ուրեք իր տեղը ունի (1). նոյն իսկ բարոյականի մասին մեր բմբռնումը «հիմնուած է բոլորովին կեղծ ու պատիւր սկզբունքներու վրայ (2)։ Ինչե՛ր չըսուեցան «Տոքթ. Տաղաւարեանի ներկայ հրատարակութեան վրայ ալ (3), որ կրնայ իր թեւ «բութիւնները ունեցած ըլլալ եւ որ սակայն «ապտակ մըն է բոլոր կեղծաւորներու եւ «շողքորթներու (4) երեսին, որոնք տխուր

(1).—Ինչպէս ձեր այս տողերուն մէջ։

(2).—Քանի որ ձեզ նման բարոյախօս ընկերաբաններ ու առաջնորդողներ ունինք։

(3).—Ի՞նչ իրաւունքով, առանց կանխու ձեր կարծիքները առնելու, ատանկ բաներ կ'ըսեն կ'ըսեն... չա՛րածճիւնները։

(4).—Այդ երկու յաակիրոջ անականները ձեր ճակտին կը փակցնէ ողջամիտ և իրաւախոհ ժողովուրդը, ձեր այն լպիրջ ապտակէն շատ աւելի ահեղ, զգաստացուցիչ, և ցոյենի վիժած հասկի մը պէս՝ ձեր յաւակնոտ գրութիւնը երկիր խոնարհեցնող հարուածով մը. և այդ կերպով եթէ ինքզինքնիդ ճանչնալով, ձեր կարողութիւնը ու արժանիքը կշռելով, քիչ մը տեղերնիդ ծանր նստիք սուղ կ'ըլլայ. շատ աղէկ կ'ընէք, և բարեկամաբար զայս միայն կը յանձնարարենք ձեզ ալ, որովհետեւ՝ բարոյականը, բարոյագիտութիւնը, ընկերաբանական սկզբունքները, ու մա-

« վիճակներ միշտ պարտկելու մէջ միայն կը
« գտնեն իրենց միմեկարութիւնը: Այս տե-
« սակ նախապաշարուած ժողովրդի մը մէջ(5),
« ուր սեռային մոլութիւնները անպակաս են
« եւ ուր տգէտ ըմբռնումով մը փնտրակար
« կը նկատուի սեռային կեանքի մասին խո-
« սիլ (6), Տոքթ. Տաղաւարեան քաջութիւնը
« կ'ունենայ ամբողջ գիրք մը նուիրել այդ
« նիւթին: Այդ գիրքը կրնայ անչափահաս-
« ներու համար ոչ-օգտակար բովանդակու-
« թիւն մը ունենալ, բայց ատիկա պատճառ
« մը չէ որ չափահասները իրենց համար կեն-

նաւանդ՝ ընտանեկան բարեկրթութիւնը, ու
« ժողովուրդէ մը և զինքը առաջնորդողներէ պա-
« հանջուած համեստ պարկեշտութիւնը ձեռի-
« պէսներու գիտութեան մակարդակէն շատ
« վեր են:

(5).—Իբր թէ ձեր Եւրոպացիներուն քով,
որոնք՝ ձեզ և ձեզիպէսներու համար, լու-
սաւորեալ կամ ոչ-նախապաշարեալ ժողո-
վուրդը կը ներկայացնեն, և որոց մէջ ան-
բարոյացուցիչ, լսիրշ հրատարակութիւններ
կը վտան, սեռային մոլութիւնները անպա-
կաս են: Շիտակը, ըսելիք չի կայ ձեր խմբ.
գիտողութեան: Թուրքիացիք, իրենց նախա-
պաշարումներով, միշտ ամենէն բարոյագէտ,
ամենէն պարկեշտ ժողովուրդներն են, որոց
մէջ այնչափ քիչ է մոլութեանց տեսակները,
որչափ բազմազան՝ Եւրոպացիներու մէջ, և
գտնուածներն ալ մուտ գտած են և փո-
խանցած են Եւրոպացիներէն, միջնորդու-
թեամբ ձեր նմանաց...

(6).—Ձախողուած դատի մը ձախող ու
միամիտ փաստաբանութիւնը չէ՞ ասիկա, Պ.
Խմբ.: Արդեօք դուք ալ ձեր Պ. յօդուածա-
գրին պէս «մանրամասնօրէն աչքէ չանցու-
ցիք»՝ ձեզ և ձեզպէսները շլացնող այդ գիր-
քը. տեսէք թէ ձեր պաշտպանեալը ի՞նչ
կ'ըսէ հոտ. երես 106. «... երբեմն ալ վեր-
ջապէս (ընդհանրապէս ըսելը աւելի ճշմար-
տակերպ կ'ըլլար: Մ. Խ.) այս մոլութեան
դէմ գրուած գրքերու ընթերցումն կը գար-
թուցանէ պատանեաց համար այդ ախտի
հաճոյից ծանօթանալու բարձանքն. փորձն
ընդ հուպ ունակութեան կը վերածուի»:
Կարդացէք նաև այդ գրքի 90 և 96րդ էջե-
րը, որոց երկարութեան, և խմածտի նոյնու-
թեան համար չենք ուզեր հոս արտատպել:
Հիմա ասոր ի՞նչ կ'ըսէք. ո՞վ է նախապաշար-
եալը, ո՞վ է տգէտ ըմբռնումի տէրը, ո՞վ է
կեղծաւորը, ո՞վ է շողջորթը, ո՞վ է, ո՞վ
է...: Հասկըցա՞ք հիմա Պ. Խմբ.:

« սական եղող խնդիրներու մասին ընթեր-
« ցանութեան գրքեր չունենան (7): «Մեն-
« դական գործարանք» երկարութեան հե-
« ղինակը իր գրքին ճակատը դրած է ար-
« դէն «ի պէտս չափահասից» խօսքը (8):

« Միշտ միևնոյն ցաւն է որ զմեզ ծիծա-
« ղելի կը դարձնէ մեր բոլոր գործերուն
« մէջ: Կրթութեան, առողջ դաստիարակեան
« պակասութիւնն է այդ (9): Զօրաւոր հա-
« կազդեցութիւն (10) մը պէտք է այդ թե-
« րուսներու (11) խումբին դէմ, որ ժողո-
« վըրդին առողջ կեանք մը տալու սկզբունք-
« ները որոշելու հովերը կ'առնէ:

« O tempora! O mores! (12) » ԽՄԲ. (Մ-Ի.)

* * *

Քանի որ գրիչը ձեռքս է, խնդրեմ, հա-
ձեցէք ձեր պաշտպանեալ հայագէտին բոկ
թէ, «օրէնսգիր» կ'ըլլայ, բայց «կրօնադիր»
չըլլար, և ի՞նչ երկրորդ անգամ գիրքը տպե-
լու ելլէ, «կրօնագէտ» գրէ, որովհետև օ-
րէնքը կը դրուի՝ կը հաստատուի, մարդոց
կողմէ, բայց կրօնքը Աստուծոյ կամ Աստ-
ուածալստութեան գիտութիւնն է, և գի-
տութիւնը չի դրուիր, այլ կ'ընդունուի, կը

(7).—Կը խնդրենք որ բարեհաճիք՝ յա-
նուն ճշմարտութեան, յանուն հանրային շա-
հուն, իբրև ճշմարտ առողջաբանութիւն՝
այդ գրքի օգտակար կողմերը ցուցնելով մեր
ըսածները ջրել, քանի որ մենք՝ անոր փն-
տակար կողմերը անաչառօրէն երեւան հանե-
լու քաջութիւնը ունեցանք. պիտի ունենա՞ք
դուք ալ այդ միևնոյն անկեղծ քաջասրտու-
թիւնը:

(8).—Կարդացի՞ք այդ գրքի յառաջաբանին
վերջաբանը, ուր՝ ձեր փաստաբանածէն տար-
բեր ակնարկութիւններ կան (տես Հնրգ. Թիւ
63): Փաստաբան մը՝ իր պաշտպանեալին
դատը պէտք է նախապէս լաւ ուսումնասիրէ:

(9).—Գովելով կը գովենք ձեր կրթու-
թիւնը, առողջ դատողութիւնը, ու մանա-
ւանդ կը շնորհաւորենք ձեր բարոյական
զգացումները:

(10).—Քիմիական հակազդեցութիւն է
ինտուածնիդ, Պ. Խմբ. թէ ոչ...

(11).—Ասո՞նք են Գերմանիայէն մեզի
«հետիւյէ» բերած ապրանքներնիդ. բայց չի
տարակուսինք. ամէն մարդ գիտէ թէ, Գեր-
մանիա ի՞նչ տեսակ ապրանքներ կ'արտադրէ:

(12).—Ո՞վ. . . . Խմբ.

տացուի, 'կամ' կը գտնուի: Կրօնքը իր օրէնքները ունի, որոնք դրուած են մարդոց խղճէ: Նոյնպէս «կանախտաբան» չըլլար, այլ պէտք է ըսէ՝ կնախտաբան: Արիւնակցութիւն ալ չըլլար, այլ՝ արեւնակցութիւն: Բայց ալ կը բաւէ կարծեմ, և թողէք որ երկու խօսք ալ ուղղակի Յարգոյ Տգդ. Տաղաւարեանի ընեմ, իրբւ ճշմարիտ բարեկամ. որովհետեւ որչափ որ իր գործերը խստիւ կը քննադատեմ, այնչափ ալ կը յարգեմ ու կը սիրեմ զինքը:

Բարեկամ, լա՛ւ գիտցէք որ, զՁեզ պաշտպանողները ձեր ճշմարիտ թշնամիներն են. որովհետեւ անոնք ամենն ալ հացկատակներու պէս շուրջերնիդ ժողովուած, որպէս Եգիպտոսի առակաց մէջ՝ ազուէսը ագռաւին քով, Ձեր թիրուածիւնները ձեզ ծանօթացնել չեն ուզիր, և պարզապէս կը շողորթթեն զՁեզ. ուրտի մտի՛կ ըրէք, քանի որ անգուսպ փախաք մի՛ կամ մարմաջ մ'ունիք գրելու, հեղինակելու, որով նպատակ ունիք անշուշտ՝ չեմ ուրանար՝ իրաւունքով, նախ դրամ չահիլ, ապա հանրութեան՝ կամ սահմանափակ աւանումով, ազգին օգտակար ծառայութիւն մը մատուցանելու, ասոնց երկուքն ալ աղէկ և զովելի են. բայց մտի՛կ ըրէք մեր բարեկամական, եղբայրական խորհուրդին, և հետեւեցէք մեր ըսածներուն, պիտի օգտուիք և ձեր նպատակին հասնիք:

Նախ հայերէննիդ չտկեցէք, ողորկեցէք, յորդարեցէք, և յարմարեցէք զայն՝ այն ժողովուրդի գործածած լեզուին ու ոճերուն, որու համար որ կը գրէք: Մենք քաջ գիտենք որ, դուք կը գրէք այնպէս, որպէս չէք խօսիր կենդանի լեզուով սովորաբար: Գործածեցէք ձեր գրութիւններու մէջ ձեր սովորական լեզուն ու ոճերը, և ահա՛ առաջին յաջողութիւնը ձեռք բերած պիտի ըլլաք: Եւ կամ՝ եթէ չէք կրնար այդ միջոցը գործադրել, աւելի դիւրինը կայ. յանձնեցէք և վստահեցէք ձեր ձեռագրերը լաւ հայերէն գիտցողի մը, որ անգամ մը խղճմտորէն սրբագրութեան բովէն անցունէ զանոնք, և այնուհետեւ տուէք մամուլին: Ու ահա ձեր շնորհիւ, այդ հայագէտն ալ կը աշխատութեան պատուը վայելած՝ ու քաջ ջախջախած՝ հիշուի, և դուք ալ ազգին օգտակարապէս ծառայած՝ հիշուիք:

Երկրորդ, ջանացէք ժողովուրդին ճշմարտապէս օգտակար նիւթերու վրայ գրել, մօտէն շօշափեցէք անոր վիշտերը, և խղճմտօրէն դարման տարէք. լա՛ւ գնեցէք անոր վէրքերը, և ըստ այնմ սպեղանի մատակարարեցէք: Մօտեցէ՛ք, շա՛տ մօտեցէ՛ք ժողովուրդին, բայց աւելի անոր ատերու և հիւանդութեանց, և ո՛չ թէ անոր սեռային գործարաններուն: Ձեր ասպարէզին մէջ քանի՛ ընդարձակ և անսպառ միջոցներ ու դիւրութիւններ ունիք, անոր ճշմարտապէս օգտակար հանդիսանալու տեսակէտով. հարկ չկայ հոս մանրամասնութեանց մէջ մտնել, Ձեր շահը՝ անոր շահուն մէջ փնտռեցէք, և այն ատեն՝ հա՛ւատացէք որ ձեր խօսքային հասած ու տիրացած պիտի ըլլաք: Հակառակ պարագային՝ մեր կարծիքը սա է որ, լաւ է հայ գրականութիւնը կոյս մնայ, հայկական մամուլը ամուլ մնայ, քան թէ այս օրինակ երես... կարմրցնող վիժումներ ունենայ:

ԿԵՍԱՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԺԳ.

ԲՈՒՍԱՀՈՂ

Բուսահողը՝ որ կը կոչուի նաեւ փտահող (terreau), բուսահողային թթու (acide humique), առաջ կու գայ, հողին մէջ գտնուած բուսային կամ կենդանային մնացորդներու փտութեամբ: Բուսահողը ածուխի փուշի նման սեւագոյն մարմին մ'է, որ հալիւ թէ ջուրին մէջ լուծելի է, բայց չափազանց դժուար է լուծուիլ: Կը լուծուի այն փոքրիկ մէջ՝ որ քիմիկոս կամ բողասի բնածխաստ կը պարզեցնէ:

Հողի մը մէջ բուսահողին քանակութիւնը չափ կը տարբերի. կան հողեր՝ որոնց մէկ քիօկրամը հազիւ թէ կէս կրամ բուսահող կը պարունակէ, բայց ուրիշ հողերու (իւստիս սե հողերը, փոսահող «terreau») մէկ քիօկրամը մինչեւ 10—15 կրամ բուսահող կը պարունակէ:

Բուսահողը, ինչպէս ըսինք, առաջ կու գայ հողին վրայ գտնուած կամ միջատներու շնորհիւ հողին մէջ տարուած բոյսերու բեկորներու փտութենէն, որ տեղի կ'ունենայ խոնաւութեան, տաքութեան, օդին թթութեան միջոցով թեւաւոր: Միջատներն ալ ուրեմն կարեւոր դեր մը կը խաղան: Օրինակի համար. աւազով լեցուն ծաղկամանի մը մակերեւոյթին վրայ թաղենք մի քանի չոր տերեւներ և մի քանի որդեր, քիչ յետոյ պիտի տեսնենք որ, տերեւները աւազին մէջ 7—8 սանդիւնթի խոր կը գտնուին՝ ուր անշուշտ որդերու միջոցաւ փոխադրուած են:

Բուսահողը կը պարունակէ ո՛չ միայն բնածուխ, թթուածին և ջրածին, այլ նաև բորակածին. բուսահողը այնքան աւելի բորակածին կը պարունակէ՝ որքան լոյսի ազդեցութիւն կրած է. օրինակի համար. քիչ մը բուսահող ջուրին մէջ լուծենք ու արեւուն տակ թաղենք, սեւագոյն ջուրը երթալով պիտի դեղնի, և եթէ ժամանակ մը վերջ բորակածինին քանակութիւնը չափենք, պիտի տեսնենք որ, աւելի չափ է քան միեւնոյն բուսահողին մէջ՝ որ արեւու ազդեցութիւն կրած չէ:

Բուսահողին պտորածութիւնը պարզ պրոբա մ'է. բոյսին կամ կենդանիին մնացորդները օդին թթուածինին կը միանան, բնածուխը կ'արտադրէ բնածխային թթու, ջրածինը ծնունդ կ'ուտայ ջուրի. իսկ բորակածինը առաջ կը բերէ անուշադր կամ բորակային թթու:

Բուսահողին բաղադրութիւնը չափ փոփոխական է, բուսահողը արտադրող բոյսին համեմատ. բայց միշտ բուսահողը կը պարունակէ բոյսերու աճման ծառայող տարրեր: Բոյսերու մնացորդներու տարրազադրումը երկու կերպ կ'ըլլայ.

1. Կամ օդին ներկայութեամբ.

2. Կամ օդին բացակայութեամբ.

Ինչպէս՝ երբ այդ մնացորդները ծածկուած են ջուրով, որով պիտի ունենանք նաև երկու տեսակ բուսահող.

Ա. Մեղմ բուսահող (doux)

Բ. Թթու բուսահող (acide):

Բոյսերու տարրազադրութիւնը տեղի չունենար միայն օդին թթուածինին, տաքութեան, խոնաւութեան ազդեցութեամբ. մեր աչքերուն անտեսանելի կարգ մը ամենափոքրիկներ ևս մեծ դեր կը խաղան բոյսերու մնացորդներու տարրազադրման մէջ. այս ամենափոքրիկները կը կոչուին «միքրոպ», «խմորիտ» (տեսէ՛ք «Հողին խմորիտները» վերնագրով մեր յօդուածները «Հանրագիտակ»ի նախորդ թիւերուն մէջ):

Այս խմորիտները երկու գլխաւոր տեսակներու կը բաժնուին, ոմանք գոյութիւն կրնան ունենալ միայն այն ժամանակ՝ և հոն՝ ուր օդ կայ, ասոնք «օդակեացներն» են. իսկ ուրիշ խումբ մ'ալ կայ որ, օդ չեղած տեղը կրնայ գտնուիլ և ապրիլ, ասոնք ալ «անօդակեացներն» (anaérobies) են:

Օդակեաց խմորիտներու գործունէութեամբ կը կազմուի մեղմ (doux) բուսահողը. իսկ անօդակեաց խմորիտներն կ'արտադրեն թթու բուսահողը:

Բուսահողը եթէ տարրազադրելու ըլլանք, պիտի ունենանք բորակներ, անուշադր, բնածխային թթու, անուշադրի բնածխատ, ազատ բորակածին, յետոյ բոյսին կազմածին մէջ գտնուած հանքային նիւթերը:

ԲՈՐՈՍԿԱՅԻՆ ԽՄՈՐԻՏՆԵՐ (ferment nitrique).—Բուսահողին վրայ ազդող խմորիտները չափ տեսակ են. բայց խմորիտ մը կայ որ չափ կարեւոր դեր մը կը խաղայ, բուսահողին մէջ գտնուած բորակածինը բորակի վերածելով. արդ՝ բուսահողին մէջ գտնուած գործարանական բորակածինը բոյսերու սնուցման բնաւ չծառայէր. այս բորակածինը բոյսերէն ծծելի ըլլալու համար պէտք է որ բորակի վերածուած ըլլայ: Առանց այս խմորիտներուն ուրեմն, հողին մէջ գտնուած բորակածինային մնացորդները անօգուտ պիտի ըլլային. ուրեմն բորակածինը բորակի վերա-

ծող խմորիաները չափ կարեւոր են: Գործա-
րանական բորակածինին բորակի վերածումը՝
այս խմորիաներու շնորհիւ, կը կոչուի «բորա-
կացում» (nitrication): Աւելցնենք նաեւ թէ
բորակացումը պատճառող խմորիաները կը բո-
նան գործել միայն կրաքարի ներկայութեամբ.
հոս կը տեսնենք կրաքարի օգտակարութիւ-
նը. ուրեմն հոն ար կրաքարը կը պակսի,
պէտք է աւելցնել, որովհետեւ առանց կրա-
քարի, խմորիաները բորակածինը կը վերածեն
անուշադրի:

Բուսահողը սպունգի նման սեւ մարմին
մէջ՝ որ չորնալով կը փռչիւնայ, բայց իո-
նաւ ժամանակ մեծ քանակութեամբ (կաւէն
աւելի) ջուր կ'իւրացնէ և կը պահէ, նոյնպէս
արգասաւորիչ նիւթերն ալ իւրացնելու և
պահելու մեծ գիւրութիւն ունին:

Շէշգինկ ցցուց թէ՝ բուսահողին մէջ կայ
սեռակ մը գործարանական չաղախ (ciment
organique), որ հողին արգասաւորիչ նիւթե-
րը պահելու յատկութիւնն ունին:

Կռանոս հաստատեց չափ մը փորձերէ
վերջ թէ՝ Ռուսիոյ աւազները՝ որոնք բնաւ
կաւ չեն պարունակեր, իրենց պարունակած
բուսահողին շնորհիւ՝ մշակութեան յարմար
հողերն են: Բուսահողը կը հայթայթէ բոյ-
սին աճման պէտք եղած տարրերը, նոյնպէս
բուսահողին մէջ գտնուած գործարանաւոր
չաղախը բաւական է մեծ քանակութեամբ
ջուր պահելու:

Կաւն ալ, ըստ Շէշգինկի, կը պարունա-
կէ հանքային չաղախ մը, որուն շնորհիւ ջու-
րը և արգասաւորիչ նիւթերը կը պահէ: Երբ
այս հանքային և գործարանական չաղախնե-
րը միանան, իրենց բունելու (ջուրը) յատկու-
թիւնը քիչ մը կը չեղաքանայ. այս սրտածա-
ռաւ երկրագործք իրաւունք ունին ըսելու
թէ՝ «Այլը հողը կը կախուղցնէ»:

Շ-ր.

Սեղիվի

Մ. Կ. ՄԱՆԱՔԵԱՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՐԲԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Բ.

Քարեր կամ ապաւաժներ. — Անոնց պլազան
տեսակները:

— օ —

(Շար. Թիւ 66 էն)

15. — Երբ երկրաբանութիւն կ'ուսանինք,
մեր առաջին գործը պիտի ըլլայ, քարերու ի-
րարմէ ունեցած տարրեր և նման գլխաւոր
կէտերուն նկատմամբ՝ յոտակ և որոշ ծանո-
թութիւն մը ունենալ: Անոնք երկրիս պատ-
մութեան լրացուցիչ մասերն են: Եթէ հաս-
կընալով պիտի հետեւինք այս պատմութեան
ընթացքին, և որ աւելին է, եթէ պիտի
ջանանք անոր ո՛ր և է մէկ մասը մեկնել կամ
անոր ծանօթանալ, պարտինք ճշգիւ դասու-
ւորել, որպէս զի կարենանք հասկնալ անոնց
գործածութեան կերպն ու եղանակը: Երկ-
րաբանութիւնը ամենուս համար բացուած
մատեան մ'է, զոր ամէն մարդ կրնայ կար-
գալ և ուսանիլ: Այն խնդիրները, զորս նա
կը յուզէ, կը բաղկանան հանապազօրեայ
կեանքի յարաբերակից և ընտանի տարիւ-
ներէ, և մտացի հետազօտող մը, ո՛չ միայն
այս հարցումներն հասկնալ կրնայ յուսող,
այլ իր արդէն ստացած հմտութեան վրայ,
կրնայ աւելի նոր ծանօթութիւններ յաւելուլ
և բարդել:

16. — Մէկը՝ որ քիչ մը ճամբորդած է,
կամ նոյն իսկ մէկը՝ որ ճամբորդած չէ, ան-
շուշտ թանգարանի մը դարակներու մէջ հա-
նածոներու հաւաքածոյ մը տեսած է, և
տարակոյս չկայ որ, քարերու թիւն ու պէս-
պիսութիւնը իրեն այնքան մեծ և չիտթե-
ցուցիչ պիտի երեւին որ, զանոնք ուսումնա-
սիրելու գործը արտնդիւն և դժուարին բան
մը պիտի կարծէ: Առումով մը ճշտ է այս
գաղափարը, այսու հանդերձ, հետազօտու-

թեան տալտուկն ու դժուարութիւնը կարելի է մեծաւ մասամբ փարատել: Ահա՛ թէ ինչպէս.—

17.—Դիցուք թէ հարցուի մեզ՝ թէ մեր բոլոր կեանքին մէջ քանի՞ տեսակ գրքերու պատահած ենք: Մենք պուստգրքի մը մտածելու, պիտի չկրնանք դիւրաւ գոհացուցիչ պատասխան մը տալ: Նախ թէ՛ առաջին տեսութեամբ պիտի չկրնանք բոլոր տեսակ գրքերը մէկանց հաշուել: Դժուար պիտի ըլլայ մեզ որոշել թէ՛ ո՞ր գրքերը նման են և որո՞նք տարբեր: Ոմանք նոր են, ոմանք մեծ՝ և ոմանք ալ փոքր են. ոմանք խաւաքարտով ծածկուած են և ոմանք ալ լաթով, մինչդեռ ուրիշներն ալ կաշեկազմ են և ոսկեզօծ: Ոմանք Կ. Պոլսոյ, իսկ այլք Լոնտոնի և Բարիզի մէջ տպագրուած են: Ոմանք ՀայԹուրք. և Յուն. են, իսկ այլք՝ Անգլ. Գաղղ. և Գերմ. Սակայն երբ այս կամ նման տարբերութեանց վրայ անդրադառնանք, կը տեսնենք թէ ամէնքն ալ սոսկ արտաքին ձեւով, կազմով և երեւոյթով նման են իրարու, թէ և էապէս անհունս կը տարբերին իրարմէ: Գրքի մը կարեւոր մասը՝ ո՛չ թուղթն է, ո՛չ տպագրութիւնը, ո՛չ կազմը, ո՛չ թուականը, ո՛չ ալ՝ նոյն իսկ լեզուն, այլ՝ պարունակած իմաստն ու խորհուրդները՝ որով գրքին կը ծանօթանանք: Այս խորհուրդները կրնան տպագրուիլ խոշոր կամ փոքրիկ գրքի մը մէջ Հայ. Անգլ. Գաղղ. կամ Թուրք. լեզուաւ, սակայն խորհուրդները չեն փոխուիր, և գիրքը ամէն ժամանակի և դարու մէջ, էապէս միշտ նոյնը պիտի ըլլայ և մնայ:

18.—Հետեւարար, երբ գրքերու սոսկ անկարեւոր և արտաքին նմանութիւններէն կամ տարբերութիւններէն կ'անցնինք գրքին էական յատկութեան, շուտով վերահասու կ'ըլլանք թէ՛ գրքերը մեր կանխաւ կարծածին չափ բազմատեսակ չեն: Եւ երբ իրենց նիւթերուն և պարունակած իմաստին համաձայն դասաւորենք զանոնք, կը տեսնենք թէ՛ գրքերէն ոմանք Բերականութիւն են, այլք՝ Պատմութիւն, ուրիշներ Աշխարհագրութիւն, ոմանք՝ ռդեգրական, և ոմանք ալ՝ վիպական և բանաստեղծական: Այս ա-

նուններուն ներքեւ, նոյն պարունակութիւնն ունեցող հարկւրաւոր գրքեր կրնանք զետեղել, թէ և անոնք արտաքուստ՝ զոր օր. չափ ու կազմութեան, ժամանակի և նոյն իսկ լեզուի կողմանէ գլխովին տարբերին իրարմէ: Երբ գրքերն այսպէս դասաւորենք, այսինքն՝ ո՛չ թէ իրենց աւերելոյթ, այլ էական յատկութեանց և նմանութեանց համաձայն, փոյթ չէ թէ քանի՞ տեսակ գրքեր կու գան մեր ձեռքը, և ո՛չ ալ, թէ անոնք քանի՞ տարբեր լեզուներով գրուած են — ասով մենք հետեւած կ'ըլլանք «դասաւորութեան սկզբունք»ին, այն է, ո՛ր և է գիրք ո՛ր և է ատեն դիւրաւ կարենալ ձեռք բերելու համար՝ նոյն նիւթին վրայ ճառող նոյնիմաստ գրքերն ի միասին չարիւղ միշտ:

19.—Հիմա գրքերու տեղ ջանանք դասաւորել քարերն՝ իրենց մի քանի յատկութեանց համեմատ: Նախ՝ անգամ մը խորհինք քարի բոլոր տեսակներուն վրայ՝ զոր կրնանք յիշել, և ապա ջանանք հաւքել անոնց նկարագիրները: Թերեւս իրենց դոյներուն համեմատ դասաւորենք զանոնք. — Սեքար, որպիսի է ածուխը. սպիտակ քար, ինչպէս է կաւիճը, աղը: Սակայն շուտով կը տեսնենք՝ թէ միւսնոյն քարը՝ մարմարոնք, երբեմն սև և երբեմն սպիտակ է: Ուրեմն, յայտնի է թէ՛ գոյնը չկրնալ մեր դասաւորելու սկզբունքին օգնել. հետեւաբար կարծր և կակուղ քարերուն կարգը կրնանք դասել զայն: Սակայն այս անգամ ալ պիտի ստիպուինք, իրարու բոլորովին աննման քարեր՝ սոսկ իրենց կակղութեան և կարծրութեան նայելով դասաւորել. մինչդեռ կակղութիւն և կարծրութիւն՝ գրքի մը թղթին կամ տպագրութեան ձեւին նման արտաքին, պատահական և անկարեւոր յատկութիւններ են միայն:

20.—Պէտք է զանազանենք թէ՛ ի՞նչ են քարերու իրական և էական յատկութիւնները. և առ այս՝ գրքերու դասաւորման նոյն մեթոտը պէտք է ի կիր առնուլ, նաև քարերու յատուկ դասաւորութեան մէջ:

(Շար.)

Ս. Յ. ԳՐԶՂԵԱՆ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. թիւ 67 էն)

Գ. — ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր կաղմերը ընդհանրապէս մայրի մէջ՝ կէս օրուան մօտ կը կատարուի մեղուներուն գաղթականութիւնները։ Այդ եղանակին՝ մայր մեղուն խիստ շատ հաւելիթ ածելով՝ յառաջ կը բերէ մեղուներու բազմութիւն մը, որոնք չորմուելով փեթակին մէջ, մայր մեղուի մը առաջնորդութեամբ դուրս կ'ելնեն։ Այս է գաղթականութիւնը, որ կ'ըսուի նաև «ձագ տալ» (օղու վէրսէք)։ Երբ գաղութը օղը կ'ելնէ, տեղացիները սովոր են քար կամ սառն ծեծել, և ձայն հանել։ Նաև հողի փոշի կը նետեն մօտակայ ծառի մը վրայ, որով մեղունները կարծելով թէ՛ իրենց խումբէն մեծ մասը այն կողմն է, կու գան ծառին վրայ կը նստին։ Այս ժամանակ անոնց վրայ ջուր սրսկելու օգուտն ալ տեսած ենք։

Մենք այս աշխատութիւնները դիւրացնելու համար, քանի մը գործողութիւններ փորձեցինք՝ և մեծապէս յաջողեցանք։ Ահա անոնցմէ մէկ երկուքը։ Առնենք,

25 տրամ վարդի ջուր (կիւլ սույու)

100 » վարդ,

5 » ականամոմ։

Այս խառնուրդը կրակին վրայ՝ բերանը գոց ամանով մը եփեցինք։ Ետոյ 15 տրամ անանուխի ոգի (նանէ բուհը), 10 տրամ լեմոնի ոգի (կլիմօն բուհը) խառնելով՝ պարապ փեթակի մը մէջ քսեցինք։ Փեթակը մեղուատունէն քիչ մը հեռի, և լեցուն փեթակէն 2 մեթրի չափ բարձր դիրքով տեղ մը հաստատեցինք։ Հետեւեալ օրը մեղունները սկսան երթեւեկել, և կէսօրուան մօտ գաղթականութիւն մը ելնելով, ուղղակի հոն մտաւ։

Բ. 50 տրամ չորացած թուզը (թորպա ինձիրի)

20 » մեղրի ջերմը,

25 » անանուխի ոգիով՝ ճմռեցինք

և պարապ փեթակի մը մէջ քսելով, մեղուատունին դիմացը հաստատեցինք։ Այս փեթակին մէջ, դուրսէն, այսինքն՝ օտար գաղթականութիւն մը եկաւ մտաւ։

Ուրիշ մ'ալ։ Նոյնպէս պարապ փեթակի մը ներսի կողմը, վերին մասին վրայ հաստատեցինք ջերմի ճերմակ՝ այսինքն չեցուած կտոր մը, և 10 տրամ անանուխի ոգին շաղուեցինք 50—70 տրամ մեղրի մէջ, ու փեթակին ներսը քսեցինք։

Ասոնցմէ կը հետեւի թէ՛ մեղուն հոտաւոր բաներու կը ձգտի ու հոն կը դիմէ. ուստի գաղթականութիւններու ժամանակ կրնանք անոնցմէ գործածել։ Սակայն հաւառակ այս նախապատրաստութիւններուն, երբեմն կ'երթայ ծառի մը ճիւղին վրայ կը կենայ։ Այն ատեն, պէտք է որ պարապ փեթակը քիչ մը անուշոտելով, առնենք ու մեղուններուն գունդը մէջը լեցնենք։ Եթէ մեղունները մեզի նեղութիւն պատճառեն, կըրնանք ո՛ր և է ծուխով, գոր օրինակ՝ եգիպտացորենի չոր կուրծը (գոջան) միացնելով հանդարտեցնել վանոնք։ Տեղացիները կը գործածեն կովի չոր թրիքն ընդհանրապէս։

Երբեմն, մեղուններուն խումբը կը կենայ այնպիսի բարձր ու անմատչելի տեղեր, ուր կէ խիստ դժուար կրնայ առնուիլ։ Այս պարագային, կրնանք գործածել երկայն ձող մը՝ որու ծայրը հաստ թելէ կամ փայտէ չըջանալով (չէմպէր) բերանը լարուած պարկ մը կապած ըլլայ։ Շատ անգամ կրնանք սանդուխ մը դնելով ելնել, և այն ճիւղը՝ որուն վրայ է գնտակը՝ մեղմով կտրելով, սանդուխէն վար իջեցնել, ու փեթակին մէջ թօթուել։ Երեկոյին՝ երբ արեգակը մարը մտած է, և մեղունները իրենց նոր փեթակին մէջ ամփոփուած են, պէտք է փեթակին ծակերը գոցել՝ ու առնելով իր տեղը տանիլ։ Երբեմն գաղթականութիւնները դարձեալ կը մտնեն իրենց առջի փեթակին մէջ։ Ասիկա դիւրին է արգիլել, մայր փեթակին տեղ ուրիշ պարապ փեթակ մը դնելով։

Եթէ ուզենք միւսնոյն օրուան գաղթականութիւնները միացնել՝ սակաւաթիւ ըլլալուն համար, հարկ է առաջին գնտակը փեթակին մէջ առնելէն վերջ, ուրիշ գաղ-

թականութիւն մ'ալ առնենք, ու ծխելով
ցնցենք միեւնոյն փեթակին մէջ. սասանկով
չստ գիւրին կ'ըլլայ միաւորութիւնը:

Տախտակէ փեթակներուն վրայ, արուես-
տական դաղթականութիւն մը կատարելու
համար, ամենէն դիւրինը՝ աշխատութեան
վարձատրութիւնը գտանք Հ. Քաջունիի գը-
ծած, և Լէհաստանի մէջ գործածուած կեր-
պին մէջ: Պարզենք այս կերպը: Այն փեթա-
կը՝ որուն մէջը լեցուն է մեղուներով, և
կ'ուզենք այդ գորտուր ընտանիքէն ուրիշ
գաղթականութիւն մը հաստատուել՝ առանց
սպասելու անոր ձագ տալուն, պետք է որ,
կէսօրուան մօտ, մինչ գործաւոր մեղուներուն
մէկ ժառը մեղր, և ուրիշ պէտքոս նիւթեր
հաւաքելու համար դուրս ելած են, փեթա-
կին ետեւի կտրարիչը բանալով լաւ մը
ծխենք: Յետոյ գործաւոր մեղուներու հա-
կիթով կամ որդերով լեցուած մէկ երկու բա-
ւական մեծ կակ ջերջի կտորներ առնենք, և
նախ ընտանիքը կաղնուելիք պարսպ փեթա-
կին վերի առաստաղէն կախենք, նաև մեղրով
լեցուն քանի մը կտոր ջերջ ալ կը դնենք
նոյն փեթակին մէջ: Այն նոր բնակարանը կը
դնենք մայր փեթակին տեղ, միւսը այլուր
տեղափոխելով: Գործաւոր մեղուները երբ
դաշտէն կը վերադառնան, կը մտնեն այս
վերջին փեթակին մէջ, և հոն կ'աշխատին:
Մայր մեղուի բջիջ մ'ալ կը շինեն, այսպէս
մէկ-երկու շաբաթ վերջը կ'ունենանք կանո-
նաւոր երկրորդ փեթակ մը:

Մեր մեղուատունը պլտիկ ըլլալով, մայր
փեթակը վերջինէն շատ հեռի չկրցինք դնել.
հետեւաբար՝ դաշտէն դարձած մեղուները,
չստ անգամ առջի փեթակին մէջ կը մտնէին՝
ճանչնալով անոր հոտէն: Ասոր առաջին առ-
նելու համար, փորձեցինք ականամոմի, ջերջի
կտորներու և չաքարի փտորներու խառնուր-
դը ծխելով. այնուհետեւ մեղու մը անգամ
չմտաւ, բաց ի փեթակին դրսի մեղուներէն:

Դ-ը.

Պարտիզակ

Գ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Պ Ո Ղ, Պ Ա Տ

Պատմական և ընդհանուր տեսութիւն. — Պատ-
րաստութիւն. — Գործածութիւն. — Իր տե-
սակները, և ստոյգ ուրդի յատկութիւնները:

(Շար. թիւ 66 էն)

— 0 —

Երկարատեւ փորձերով հաստատուած է
որ, պողպատի այս ֆիզիքական նոր յատ-
կութիւնները այնչափ զօրաւոր կ'ըլլան, որ-
չափ իր միտումը ուժգին ըլլայ. այսինքն թէ,
չստ բարձր բարեխառնութեան մը մէջ տաք-
ցնելով: Խիստ ստորին բարեխառնութեան
մը մէջ կը պաղեցնեն: Նայնպէս, երբ այս
կերպ միտած պողպատը կրկին տաքցնելէ
վերջ, թողունք որ կամաց կամաց պաղի՝
ինչպէս նախորդ յօդուածով ըսինք, կրկին իր
բնական յատկութիւնները կը վերստանայ:

Պարզ ակնարկով երկաթը, պողպատէն ո-
րոշել շատ դժուար է, երկուքն ալ իրարու յար
և նման շատ մը հասարակ յատկութիւններ
ունենալնուն համար: Երբ հասկնալ ուզուի
թէ, ներկայացուած մետաղի կտորը, կամ
զանգուածը երկաթ է թէ պողպատ, վրան
կաթիլ մը անկեղծանական թթուութ (քէլատ)
կաթեցնելով խկոյն յայտնի կ'ըլլայ. որովհետեւ՝
եթէ պողպատ է, արուելէն վերջ, թթուութի
կաթած տեղը սև բիծ մը կը գոյանայ:

Գլխաւորապէս 5 տեսակ պողպատ կայ,
իրենց պատրաստութեան եղանակին համա-
ձայն:

1. — «Բնական պողպատ», որ կ'ստացուի
բուն երկաթի հանածոյէն, առանց ուրիշ
և է միջնորդական գործողութեանց:

2. — «Զտուած պողպատ», զոր կը պատ-
րաստեն ձուլածոյ երկաթը զտելով, այսինքն՝
կրկին հալեցնելով՝ իր բաղադրութեան մէջ
գտնուած բնածուխէն այնչափ կը հանեն,
մինչև որ պողպատի քիմիական բաղադրու-
թեան հաւասարի:

3. — «Շաղաղուած պողպատ». — Մաքիւ

բողոքովին կը տարբերի միւսներէն, իր պատ-
րաստութեան դրութեամբ, որ կը կատար-
ուի, զուտ երկաթին մէջ բնածուխ մտցնե-
լու գործողութիւնով:

4.—«Ձուլածոյ պողպատ», որ կը պատ-
րաստուի անկատար կերպով բնածխացած
վերի երեք տեսակ պողպատները հալեցնելով.
այս կերպով՝ բնածուխը մետաղին ամէն կող-
մը հաւասարապէս տարածելով, թէ համա-
սեռ կ'ըլլայ, թէ նուրբ, և թէ յառկութիւն-
ներով ընտիր:

5.—«Յարաւորդեալ (այարլը) պողպատ.—
Ընտիր տեսակէ պողպատ մը հալեցնելով, հե-
տը կը խառնեն ուրիշ մետաղներ, որով յա-
ռաջ կը բերեն տարբեր յատկութիւններով
օժտուած պողպատ մը:

Համառօտակի բացատրենք այս 5 տեսակ
պողպատներու պատրաստութեան եղանակը:

Բնական պողպատը միայն մէկ դրութիւ-
նով կ'ստացուի, այն է՝ երկաթի հանածոն
ուղղակի հալեցնելով: Դարձաւ սկիզբները
տոկաւին չէին կրնար հասկնալ թէ, հալոցէն
գուրս եղած քծուարը (քիւլիւչէ) պողպատի պի-
տի ըլլայ՝ թէ երկաթ. բայց հիմա, որչափ գի-
տութիւնները յառաջ գային, և պողպատի
բաղադրութիւնը ճանչցան, ստուգապէս գի-
տեն թէ հալոցէն ի՞նչ պիտի ստանան. և կա՛մ
հանածոն՝ ըստ կամա՝ պողպատի կամ երկաթի
կը վերածեն: Այս կերպով պատրաստուած
պողպատը ամէն տեսակ հանածոներով կա-
րելի չէ ձեռք բերել, պէտք է գործածել
մասնաւորապէս մագնանետի (մանկանէզ)
հանածոներ, որոնք դիւրութեամբ կը հալին:
Գործողութիւնը միշտ կը կատարուի փոքր
քանակութեանց վրայ: Այս պողպատի գոր-
ծածութիւնը սահմանափակ է. պաղ վիճակի
մէջ դիւրաւ կը ծեծուի, ինքնիրեն կամ եր-
կաթի վրայ առանց դժուարութեան կը զօղ-
ուի. մէկ քանի անգամներ իրարու ետեւէ
հալելու աստիճան կրնայ տաքցուիլ, առանց
իր ֆիզիքական յատկութիւնները կորսնցնե-
լու. իր այս առաւելութիւններով, թէ և մեծ
յարմարութիւն ունի այլ և այլ գործիքներու
պատրաստութեան (ուրոգ, մուրճ, դուր,
դանակ, կացին, հողագործական գործիքներ
ևլն.) բայց դժբաղդաբար զանգուածին ա-

մէն կոպը հաւասարապէս բնածխացած չըլ-
լալով, որ մէկ մասը չափազանց կարծր, որ
մէկն ալ կակուղ, փխրուն ևլն. կ'ըլլայ. երկ-
րորդ՝ այս տեսակ պողպատները գտելու հա-
մար՝ փայտի ածուխ պէտք է անպատճառ,
որով՝ պատրաստութեան նախնական ծախ-
քերը կրկնապատիկ կ'աւելնան. և երրորդ՝
քանի որ կարելի չէ միեւնոյն անգամ մեծ
քանակով պատրաստել, հետեւաբար և՛ իր
գործածութիւնը սահմանափակ կը մնայ միշտ.
մասնաւոր դր՝ այս վերջին տարիներուն մէջ
միւս պողպատները այն աստիճան աժանցած
են որ, չափ պարագաներու մէջ, փոխանակ
պողպատագօգ երկաթ գործածելու, ուղղակի
պարզ պողպատ կը գործածեն: Բնական պող-
պատը Պոլսոյ հրապարակին վրայ «գայնակ
չէլի» անունով կը ճանչցուի:

Հնդկական, պարսկական, դամասկեան
պողպատներն ալ բնական պողպատի տեսակ-
ներ են, թէ և պատրաստութեան եղանակ-
ները տարբեր, և երբեմն ալ իրենց բաղա-
դրութեան մէջ ուրիշ մետաղներ խառնուած:
Այս վերջինները ընդհանրապէս Եւրոպացոյ
պատրաստած կեղծ տեսակներն են, որոնք
այդ պողպատներու պատրաստութեան եղա-
նակին թափանցած չըլլալով, ջանացած են
անոնց նմանցնել, սովորական պողպատին
խառնելով օտար մետաղներ:

Հնդկի պողպատը երկու տեսակ կ'ըլլայ,
խակ պողպատը՝ զոր կը կոչեն «վուց», և
միւսը բանուած, զոր կը կոչեն «Դամասկեան
պողպատ»: Վուցը կ'արտադրեն, ուղղակի
երկաթի հանածոն հալեցնելով. իսկ դա-
մասկեանը ձեռք կը բերեն՝ վուցը կրկին հա-
լեցնելով. ըսել է, առաջինը՝ մեր վերը յի-
շած բնական պողպատին մէկ տեսակն է,
իսկ երկրորդն ալ՝ ձուլածոյ պողպատին:

Շար.

Ղ. ԲՈՒԱՏ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԿԱՆ

ԽՈՇՈՐ ՊՏՈՒՂՆԵՐ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Խոշոր խաղող, կեռաս, տանձ, խնձոր
ևլն. հասցնելու համար, հետեւեալ միջոցը
կրնաք գործադրել: 100 լիդրա ջուրի մէջ
լուծեցէք 2 քիլո երկաթի ծծմբատ (կանաչ
արջասպ—զածը գըպըզ կամ գարա պոյա),
և ձարձատիչի (ջուրը փոշիի պէս մաղող տե-
սակ մը ջրհաններ, որոց մասին գրած ենք
անցեալ տարի՝ Միլտիուի վրայ խօսած ա-
տեննիս) մը միջոցաւ ուռզեցէք ծառին թէ
տերեւները, և թէ պտուղները: Բայց պէտք
է այս մասին՝ յարմար ժամանակը որոշել:

Խաղողին համար՝ պէտք է սպասել որ,
ողկոյզները իւննց սովորական խոշորութեան
երկու երրորդ մասին հասած ըլլան. այն ա-
տեն՝ առաջին ձարձատումը կ'ընեն, ամիս մը
վերջը՝ գործողութիւնը կը կրկնեն, և այգե-
կութէն 20 օր առաջ ալ, վերջին անգամ
մ'եւ կը կատարեն: Այսպէս նաեւ որոշելու է
միւս միրգերու ժամանակն ալ:

ԲԱՑԽՈՂ ԳԻՆԻՆԵՐԸ ԱՆՈՒՇՑՆԵԼ

Ընդհանրապէս կը պատահի որ, ունեցած
գինիների քաղցրելու ձամբան կը բռնէ, և կը
շուարիք կը մնաք թէ ինչ ընել պէտք է.
ահաւաստիկ.

Բոլորովին թթուած գինիները խիստ
գոգուար է անուշնել. բայց կրնաք հետեւե-
ալ գրութիւնները փորձել, ամէն պարա-
գայի մէջ խարխախանօք:

Նախ ըսենք թէ, քաղցած գինին, եթէ
մէկ լիդրային 1 կռամ թթուութեամբ պարունակէ,
կամ 1 քաշին 1 տրամ, այլ ևս անկարելի է
զայն բուժել: Արդ՝ գիտնալու համար թէ՝
քաղցող գինին, իր մէջ ո՞րչափ քաղցաւա-
կան թթուութեամբ կը պարունակէ, կատարեցէք
նախ հետազայ փորձը: Առէք մէկ կռամ կա-
լի բնածխատ (քառապոնադ տը բօթաս, մեր
գիտցած պարզ բօթասը), հալեցուցէք քիչ մը
ջուրի մէջ: Փորձարկելի գինիէն ճիշտ 1 լիդ-
րա լեցուցէք չիլի մը մէջ, — կամ ճիշդ 1
քաշ, և այն ատեն բօւսան ալ 1 տրամ,
— վրան աւելցուցէք կալի լուծաջուրը,

մէկ երկու անգամ ցնցեցէք, քիչ մը վերջը
համը նայեցէք, եթէ թթուութիւնը չէ ան-
ցած, ըսել է 1 կռամէն աւելի թթուութեամբ
պարունակէ իր մէջ. հետեւաբար՝ առանց
մտածելու, պէտք է զայն քաղախ չինել.
Իսկ եթէ համը փոխուի և անուշնայ, այն
ատեն նոր փորձեր կատարելու է, մինչեւ որ
պէտք եղած կալի լուծաջուրին որոշ և ա-
մենափոքր քանակը գտնուի: Փորձելը կա-
տարելու է միշտ 1 լիդրա գինիի վրայ, (կամ
եթէ կ'ուզէք, մէկ քաշի վրայ, թէ և լիդրայի
հաշիւները շատ գիւրին կը կատարուին) և
երբ կատարեալ յաջողութիւն գտնէք, այն
ատեն՝ հաշուելով ամբողջ տակաւի պարու-
նակութիւնը, կրնաք գտնել պէտք եղած
կալի քանակը:

Ունեք կը գործածեն նաեւ, կաւիճ կամ
մարմարիտի փոշի. բայց միշտ փորձերը խոր-
խախուսով պէտք է ընել, և 1 լիդրա գի-
նիի վրայ կատարելու է. կաւիճը կամ
մարմարիտի փոշին ալ 1 կռամէն ունե-
լու է, յետոյ՝ բարձրացնելու է 1 ու կէս կռա-
մի, 2 կռամի: Եթէ այս արուած չափերուն
մէջ յաջողութիւն չի գտնաք, մի փորձէք այլ
ևս պարապ տեղը, և խսկոյն ձեր գինին քա-
ղախի վերածել ջանացէք: Իսկ երբ վերայի-
եալ փորձերով յաջողութիւն գտնէք, այն
ատեն՝ գինին անուշնայէն յետոյ, պէտք է
իր մէջէն պակասած ալքոլին տեղը լեցնել (գի-
նիին մէջ գտնուած ալքոլն է որ քաղախի կը
փոխուի). ուստի՝ 100 լիդրա գինիի համար,
մօտաւորապէս աւելցնելու է 1 լիդրա ընտիկ
տեսակէ ալքոլ, և 30 կռամ ալ տորտական
թթուութեամբ (ասիտ դուգուր—քրքրմ գարուար
էքլիսի): Թէեւ պէտք է փորձելով հասկնալ
թէ, ո՞րչափ ալքոլ պակասած է գինին մէջն,
և ըստ այնմ աւելցնել պէտք եղած քանա-
կութիւնը. բայց այս գործողութիւնը մօտ-
նաւոր և երկար բացատրութիւն պահանջե-
լուն, ուրիշ առթիւ: Միայն՝ անցողակի ը-
սենք թէ, գինի մը լաւ պահուելու և չի
քաղցրելու համար, գոնէ 100ին 10 ալքոլ պա-
րունակելու է իր մէջ:

Ղ. ԲՈՂԱՏ

ԺԻՒՆ ԱՅԻՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

«Պարոն Լիտենպրոք, ես ալ այդ կարծիքէն եմ թէ՛ նախ հրաբուխէն պէտք է սկսիլ. հետաքրքրաշարժ դիտողութիւններ պիտի կրնաք քաղել հոն լիաբուռն: Բայց կը հաճի՞ք ըսել թէ ինչպէս պիտի երթաք Սնէֆէլտի թերակղզին:

— Ծովու ճամբով, ուղղակի ծովախորշէն անցնելով: Ամենէն կարճ ճամբան աս է:

— Այո՛, բայց անկարելի պիտի ըլլայ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ Ռէյքեավիքի մէջ մէկ հատ մակրայի տնգամ չի կայ:

— Կրո՞ղ:

— Հետիտոն եզերքէն երթալու է, ճամբան թէ երկար, բայց աւելի շահեկան պիտի ըլլայ:

— Լաւ, այն ատեն առաջնորդ մը կ'առնեմ:

— Կրնամ ձեզի հատ մը ներկայացնել:

— Վստահելի և խելացի մէկն է, այնպէ՞ս չէ:

— Այո՛, բնիկ թերակղզեցի մը, որ հիւսիսային բաղի սրտորդութիւն կ'ընէ. կ'սպասուէր ձեզ չափ ազնի պիտի մնաք իրմէ. ապէ՛կ դանիերէն կը խօսի:

— Ե՛րբ կրնամ տեսնել զինքը:

— Վաղը:

— Ինչո՞ւ համար այսօր չըլլայ:

— Որովհետեւ վաղը միայն կրնայ հասնիլ հոս:

— Ուրեմն, վաղը կը տեսնենք, պատասխանեց մօրեղբայրս, հառաչանք մը արձակելով:

Այս կարեւոր խօսակցութիւնը վերջացաւ, իրարու ուղղուած ջերմ շնորհակալութիւններով: Ժաշի ատեն, սեղանին վրայ, մօրեղբայրս խել մը կարեւոր բաներու ալ տեղեկացաւ. օրինակի համար Սաքսիւսէմի պատ-

մութիւնը, և իր խորհրդաւոր վաւերագրին շարժառիթը. մօրեղբայրս անփոյթ էր այս խնդրին վրայ բացուելու մէջ, քանի որ Պ. Պրիտորիքսըն չպիտի ընկերանար իրենց, և ուղեցոյց մը, վաղն իսկ, իր հրամաններուն ներքե պիտի գտնուէր:

ԺԱ.

Իրիկուան, մութրիկ պտոյտ մը կատարեցի Ռէյքեավիքի տիներուն վրայ. բայց կանուխ դարձայ, և խելոյն հաստ տախտակներով անկողնիս վրայ փռուելով խորունկ քուն մը սկսայ քաշել:

Երբ արթնցայ, մօտակայ սրահին մէջ արագ արագ խօսողի մը ձայնն առի. մօրեղբայրս էր. խելոյն անկողնէս ելայ ու սրահ դադի:

Բարձրահասակ, թեթեւաշարժ ու հուժկու մարդ մը կար հոն, սրուն հետ կը խօսէր մօրեղբայրս: Այս վիթխարի մարդը սովորական ուժի տէր մէկը չէր: Աչքերը՝ շատ խոշոր ու բաւական միամիտ գլխի մը մէջ թաւալուն, մատցի աչքեր թուեցան ինծի. աչքեր, որոնք երազուն կապույտի մը երանգ ունէին: Իր երկար մազերը, որոնք անգլխացիի մը համար իսկ չէի պիտի համարուէին, իր ըմբշական ուսերուն վրայ կ'ընային: Թէ և դիւրաթեք, բայց քիչ կը շարժէր իր թեւերը, այնպիսի մարդու մը պէս, որ շատ չի հասկնար շարժուածներու լեզուէն: Յայտնի էր թէ՛ իր խառնուածքը կատարելապէս հանդարտ էր, բայց ոչ մեղի: Կը դգդայի թէ այն անսակ մարդայմէ է, որոնք մէկէն բան մը չեն խնդրեր, այլ ինքնաշխատութեան վրայ կը դնեն իրենց յոյսը. այդ թերակղզեցիին՝ կեսնքի իմաստասիրութիւնը ո՛չ խանդավառ էր և ո՛չ ալ խռովատանջ:

Խելոյն թափանցեցի իր նկարագրի այս երանգներուն, երբ մտիկ կ'ընէր մօրեղբորս կրքոտ խօսքերը: Թեւերը խաչածեւած, մօրեղբորս բազմապատիկ շարժուածներուն միջև անշարժ՝ ժխտական սլափախան մը տալու համար, գլուխը ձախէն աջ կը դարձնէր. իսկ հաստատելու համար գլուխը կը

խոնարհէր, և այնքան մեղմօրէն, որ հազիւ իր մօղերը կը շարժէին. շարժումներու ծայրայեղ ժուժկալութիւն մը կամ խնայողութիւն մը:

Անտարակոյս, իր այս արտաքին երեւոյթներէն չէի կրնար որոտող մըլլալը գուշակել. այսպիսի մարդ մը անշուշտ երէնները չպիտի կրնար վախցնել, ատոր վտառէ եմ. բայց ի՞նչպէս կ'որոտար, խնդիրը հո՞ւ էր:

Ամէն բան լուսարանուեցաւ սակայն, երբ Պ. Յրիտիրիքսըն ըսաւ թէ՝ այդ հանգարտիչ մարդը «էյտըրի որոտող» մըն էր. թռչուն մը, որուն փետուրը կը զգիին ամենամեծ հարձակութիւնը կը կազմէ: Ստուգիւ, այդ փետուրը «էտըրտօն» կը կոչուի. և զայն որոտալն ալ այնչափ զժուար բան մը չէ:

Ամառուան սկիզբները, էյտըրի էգը, որ տեսակ մը գեղեցիկ բազէ, իր բոյնը կը շինէ ֆիօրի (●) ժայռերուն վրայ, որոնց երեսները փեթտուած խոռոչներ կը ձևուցեն. բոյնը շինելէ յետոյ, նորք փետուրներով կը ծածկէ, զոր փորին վրայէն կը փեթտէ: Իսկոյն, որոտողը կամ վաճառակաւնը կու գայ այդ բոյնը կ'առնէ, և էգը նորէն կ'սկսի բոյն շինել. այս այսպէս կը տեւէ մինչև որ փետուր մը չի մնայ թռչունին վրայ: Երբ բոլորովին փետրազուրկ եղած է, ա՛լ, կարգը կու գայ սրուին: Միայն թէ արուին կարծր ու կոշտ փետուրը արժէք չունի. հետեւաբար՝ որոտողը պարսապ տեղը չի յոգնիր անոր թխտումի անկողինը յափըշտակելու. բոյնի շինութիւնը կը լմնայ վերջապէս, էգը հաւկիթ կ'ածէ. ձագուկներ կ'եղեն, և էտըրտօնի հունձքը վերստին կը սկսի հետեւեալ տարին:

Արդ՝ որովհետեւ այս բազը դերբուկ ժայռերուն վրայ չշինէր իր բոյնը, այլ անհարթ ու հորիզոնական ժայռերուն վրայ, որոնք կարծես ծովուն մէջ կ'երթան անհետանալու, ըսել է Իսլանտացի որոտողը առանց արտասովոր շարժումներու, կրնայ իր արհեստը ի գործ դնել: Տեսակ մը ագարակապան, որ ո՛չ կը ցանէ, ո՛չ կը վարէ, և ոչ ալ կը հընձէ, այլ մի՛ միայն բերքը կ'ստանայ:

(*) Սքանտինավենան երկիրներու մէջ, այս անունը կու տան նեղ ծոցերուն:

Այս դանդաղ և լռակեաց մարդը Հանն Պիէլի կը կոչուէր. Պ. Յրիտիրիքսըն յանձնարարած էր զայն, որ մեր ապագայ առաջնորդը պիտի ըլլար:

Իր կերպարանքը եզակեանքէն հակառական էր մօրեղբոր շարժումներուն հետ:

Եւ սակայն շատ դիւրութեամբ համաձայնեցան: Ոչ մէկին՝ և ոչ ալ միւսին կողմէ գնոյ մասին առարկութիւն չեղաւ. մին պատրաստ էր ընդունիլ, ի՛նչ որ նուիրուէր իրեն. միւսն ալ պատրաստ էր տալ, ի՛նչ որ պահանջուէր իրմէ: Երբէք այսքան դիւրութեամբ վերջացած սակարկութիւն չէր տեսնուած:

Հիմա, պայմաններն այն էր որ, Հանաը պարտաւոր էր մեզի առաջնորդել Սդարի գիւղը, որ Սնէֆէլս թերակղզիին հարաւային կողմը կ'ընար, նոյն իսկ հրաբուխին ստորոտը: Քսան երկու մլոն հեռու էր մեր գտնուած տեղէն. ճամբորդութիւն մը, որ մօրեղբորս կարծիքին նայելով, երկու օրէն կրնար կատարուիլ:

(Շարունակ)

Վ Ր Ի Պ Ա Կ

Ներկայ թերթի առաջնորդող յօդուածի մէջ՝ անգղուշութեամբ հետաքայ տալագրական սխալները սպրդած են.

Ա. էջ, Բ. սիւնակ, տող 19. «ամանք Յիսուսի» պէտք է կարդալ «Մանուկ-Յիսուսի». նոյնպէս Բ. էջի Ա. սիւնակի տող 31 և 32-ը պէտք է կարդալ «սերտ բարեկամն է իր հոգեւոր եղբայրը, պատկառելի ծերունազարդ վարդապետն Հ. Եղիշէ, որ կը կրէ միւսնոյն մականունը՝ զուգադիպաբար»:

—Նաեւ թիւ 66ի 1056 էջին, Բ. սիւնակի 41րդ տողը պէտք է կարդալ «երկրի մը մէջ՝ որ... իրենցմէ շատ առաջ քաղաքակիրթ էր և է. դժուարին չէ՞ քրիստոնեայ ընել ազգ մը՝ որ... Թաթէսս ու Բարթուղիմէոս ելն. ևլն.»:

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԹԷՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Չինական, Հնդկական և Ճապոնական ամենաընտիր տեսակէ եղող արտադրութիւնները պիտի գտնէք ապահովաբար վերոյիշեալ պատուաւոր վաճառատան մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարութիւնները փութով և ճշգիւ կը կատարուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ձէլալ Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճառատան ապրանքները ժողովուրդէն դընհատուած ըլլալով, շատեր անոնց կեղծը հրապարակ հանած են. ուստի զգուշանալու համար, վերոյիշեալ վաճառանիշին տակ Կ. Եավրուեան և Յ. Իսագուլեան ստորագրութիւնը փնտռեցէք:

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԷՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Աշխարհիկ լեզուով ընդարձակ բացատրութիւններ կու տայ ընդհանուր գիտական, բժշկական, երկրագործական և այլ կարեւոր նիւթերու վրայ:

Կը յանձնարարուի, ո՛չ միայն այդ մասնաճիւղերով զբաղող անձանց, այլ մինչև իսկ, և ա՛լ աւելի դպրոցական տղայոց: Գիտական բառերը, երբ իրենց բով պատշաճ մեկնութիւններ չունին,

անթափանցելի և անհասկանալի կը մնան, և շատ անգամ ուսանողը երկբայութեան մէջ կը թողուն: Վեր. Հ. Ս. Երամեանի այս նոր հրատարակող բառգիրքը՝ ո՛չ միայն այդ բառերու հակիրճ մեկնութիւնները կու տայ, այլ և անոնց կարեւորագոյն մասին՝ խնամով պատրաստուած պատկերներն ալ դրած է. ուստի՝ փութացէք առիթէն օգտուիլ, քանի որ տակաւին բաժանորդագրութիւնը աժան է, և ամէն քսակէ համար ալ դիւրամատչելի:

Մինչեւ տպագրութեան աւարտիլը՝ բաժանորդագրութիւնը 10 ֆրանք է. թղթատարութեան ծախքով 12.50 ֆր.: Յաւարտ տպագրութեան, գինը կը բարձրանայ 15 ֆրանքի:

Խմբագրութիւնն կ'ստանձնէ կանխիկ վճարուած յանձնարարութիւնները:

„Ա Դ Ա Մ“

«ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ ՆՈՐԱԳԾԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ» անունով սոյն գործը վերջապէս սկընսեալ հրատարակուիլ, որ կ'ուսուցանէ արանց և մանչ տղոց ամէն տեսակ հագուստներ, ինչպէս նաեւ ՕՍՄԱՆԵԱՆ զինուորական, ու քաղաքային համազգեստներ ԶԵԻՆԼՈՒ և ԿԱՐԵՂՈՒ եղանակը, բոլորովին նորագոյն և խիստ դիւրամատչելի մեթոտով մը:

Գնողներուն դիւրամատչելի ըլլալու համար՝ ընդհանուր գործը բաժնուած է 3 հատորներու: Ա. հատորը կը պարունակէ բոլոր «Դալեոյով» հագուստները, իրենց ամբողջ մանրամասնութեամբը: Գործն ընտիր թղթի վրայ, գեղատիպ 200 մեծագիր էջէ և 48 վիմատիպ տախտակներէ կը բաղկանայ, 250է աւելի արտայայտիչ օրինակներով ու պատկերներով: Իր գերազանց առաւելութիւնն այն է որ՝ ՉԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ ԵՐԹ, ինն կամ տասնեւմէկ չափով ձեւել կ'ուսուցանէ ամէն կազմուածքի վրայ: Ա՛լ աւելի մատչելի ըլլալու նպատակաւ, Ա. հատորին բաժանորդագրութիւնը բացուած է միայն 3 ամսուան համար կէս օսմ. ոսկի՝ կանխիկ, թղթատարի ծախքով 60 դահեկան:

Դիմել Մ. Գալէնտէր, Թարագճըլար փողոց, թիւ 49, Կ. Պոլիս:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակի կը հրատարակուի առ այժմ շաբաթը անգամ մը: Իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան ելն. գրութիւններն ու նորութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով:

Հանրագիտակի՝ իր յառաջդիմութիւնը թողլուդին յառաջդիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանի գրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները:

Հանրագիտակի կը պատասխանէ գլխաւորաբար այն ամէն օգտակար հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անաստապուծութեան, Արհեստագիտութեան, ճարտարարուեստի, Առտնին տնտեսութեան և իրենց յարակից հիւզերուն:

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս կազմեն, որոցմէ հանրութիւնը և երկիրը կրնայ օգտուիլ, խմբագրութիւնս ու է փոխարինութիւն չի պահանջեր:

Ուղղուած հարցումներու մէջէն, ամենէն առաջ կը պատասխանուի անոր, որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ:

Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ. բաժանորդներու կողմէ:

Տրուած պատասխանները չահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կ'ուղե-

ւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կըրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի: Այս պատճառաւ պէտք է մենէ անմիջական պատասխան խնդրել:

Անոնք որ իրենց զբաղումին վերաբերեալ ու է հարցում կ'ուղղեն խմբագրութեանս, և կ'ուզեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մտնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն:

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն զգացուի, ծախքը և այդ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հարցատէրը:

Հանրագիտակի կ'ընդունի այն ամէն անձանց աշխատակցութիւնը, որոնք թերթիս խմբագրութեան համաձայն հանրօգուտ յարցումներ կը զրկեն:

Իր աշխատակիցներուն կը նուիրէ առ այժմ թերթ մը: Թերթին յառաջդիմութեան հետ մտադիր է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային:

Հանրագիտակի իր բաժանորդներու կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ. եթէ փոխարժէքը կանխա՝ յանձնարարութեան հետ զրկուի:

Հանրագիտակի կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և ազդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով:

Հեղինակներ և հրատարակիչներ, որք կ'ուզեն արժանապէս գրադատուիլ կամ գնահատուիլ, պարտին Յակն օրինակ զրկել խմբագրութեանս իրենց գործերէն: